ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՐՑԱՇԱՐԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

11-րդ դասարան

1. Հայ պոեզիայի «անդուլ ու աներկյուղ» ճանապարհորդն էր Եղիշե Չարենցը՝ Հարդագողի ճամփորդը, որ գնում էր որոնելու երջանկության առասպելը՝ «Հարդագողի ուղիներում ոսկեման», հուսախաբությունից ու անտարբերությունից հոգնած հոգիներին բերելու «արեգակներ ոսկեվառ»: Եղիշե Չարենցը այս տողերը գրել է «Հարդագողի ճամփորդները» բալլադում, որտեղ անցնում է մարդը՝ մենակ ու չհասկացված, անտարբեր մարդկանց միջով, և ծնվում է իր երազների ճանապարհի հետևից գնացող մեծ անհատի ու իրական կյանքի հակադրությունը: Երազների ճանապարհով բանաստեղծը որոնում է երջանկության առասպել, բայց հայտնվում է գորշ օրերի տաղտկության մեջ, որտեղ ոչ ոք նրան չի հասկանում: Այս տաղտկալի ու խեղդող իրականությունից դուրս գալու և իր ժողովրդի կյանքը նոր հուն մտցնելու մղումով հանճարեղ բանաստեղծը 1921-1924 թվականներին գրեց իր հայրենի քաղաքի պատմությունը՝ «Երկիր Նաիրի» դրամատիկական և ողբերգական վեպը՝ պարուրված երգիծանքի նուրբ շղարշով: Հետաքրքիր է վերնագիրը՝ «Երկիր Նաիրի», մինչդեռ վեպը հեղինակի ծննդավայրի՝ Կարս քաղաքի մասին է, որովհետև Կարսն այստեղ վերածվում է հայրենիքի կորստյան խորհրդանշանի: Ամենևին էլ զարմանալի չի հնչում հեղինակի ճարտասանական հարցը.«-Ինչքա՜ն, ինչքա՜ն անգամ հարցրել եմ ես ինձ, թե ի՞նչ է վերջապես- Նաիրին. ո՞վ ենք մենք վերջապես- նաիրցիներս: Ի՞նչ ենք մենք և ո՞ւր ենք գնում: Ի՞նչ ենք եղել երեկ և ի՞նչ ենք լինելու վաղը »: Նա տեսնում է միայն «միրաժ, ֆիկցիա, միֆ, ուղեղային մորմոք, սրտի հիվանդություն», որովհետև Կարսն անցավ թշնամուն, ավերվեց առասպելից ծնված հայրենիքը: Վեպն սկսվում և ավարտվում է Կարսի նկարագրությամբ՝ Առաքելոց վանք, Վարդանի կամուրջ, Սլլան քար, Ճգնավորի մատուռ.«Ո՞ր թվեմ: Բ ոլորն էլ հրաշք են, զարմանալի զարմանք, անկարելի հանճարք»: Վեպի գլխավոր հերոսը Կարսն է՝ իր բնակիչներով, իր կենցաղով ու առօրյայով: Կարսի կերպարը դառնում է հարազատի կերպար, հայրենիքի տեսանելի կերպար: Մենք տեսնում ենք այդ հարազատի մահը, ապրում ենք քաղաքը կենդանացնող հերոսների՝ Գեներալ Ալոշի, Մեռելի Ենոքի, Մարուքե Դրաստամատյանի, և վերջապես «Լույս» նավթարդյունաբերական ընկերության ներկայացուցիչ, նաիրյան գործերի կառավարիչ Համո Համբարձումովիչ Ասատուրովի կամ Մազութի Համոյի, կամ նաիրյան Արամազդի՝«վերջին արքայակերպ նաիրցու», մնացյալ բոլոր հերոսների ողբերգական-երգիծական կյանքով, Կարսի կյանքով:Առաջին համաշխարհայինի ժամանակ ընկնում է քաղաքը, սրի է քաշվում ժողովուրդը, կախաղան է հանվում՝ գլխավերևում՝ մի տախտակի վրա գրված.«Մ. Հ .Ա. Ն .», որ նշանակում է՝ Մազութի Համո՝ Արքա Նաիրի»: Չարենցն իր վիպասքը՝ պոեմանման վեպը(քանի որ գրված չէր վեպի կանոններով), ավարտում է այսպես. «կենդանի մնացածներից շատերն արդեն ազատ են ուղեղային մորմոքից ու սրտի հիվանդությունից և իրենց երկիրն են շինում»: Խորհրդային

Հայաստանը։ Վեպը հյուսելով բանաստեղծական լեզվով՝ հեղինակը մեզ է փոխանցում իր հայրենիքի, մեր հայրենիքի կորստյան մորմոքը, անանց ցավը։

2. Ասույթի հեղինակը հայ գրականության գրական ֆիդային է՝ եղեռնազարկ հանճարը՝ Դանիել Վարուժանը։ Նա երգեց իր ժողովրդի «ցեղին սրտի» անամոք ցավը, զոհաբերվող ժողովրդի տառապանքն ու ցավը, «Ու պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր» երգեց ու տառապանքին հակադրեց մաքառումն ու հույսը։ Խիզախ ֆիդային ականատեսն էր գազանաբարո խառնամբոխի վայրագություններին, իր ժողովրդի անլուր տառապանքներին։ Հաստատապես իմանալով իրեն բաժին ընկած վախճանի մասին՝ նա մահից առաջ փառաբանում է ստեղծարար աշխատանքը, գյուղական կյանքն ու բնությունը, համոզված լինելով, ու միայն աշխատանքն ու սերը են փրկելու աշխարհը։ Նա ստեղծել է մշակների՝«դաշտի հզոր զավակների» «մարգարտյա քրտինքով» արարվող հացի երգը։ «Հացին երգը» ժողովածուն լույս է տեսել նրա եղերական վախճանից հետո, այն մի հրաշալի պոեմ է, ու պատկերված է հացի արարման ողջ ընթացքը՝ հերկից ու ցանքսից մինչև հունփք, ջրաղաց ու թոնիր, մինչև մշակների ապրեցնող աշխատանքի հակադրումը «ոսկե հորթերին»։ Ռոմանտիկ հերոսի միջոցով Վարուժանը կերտում է արարչագործ ժողովրդի ազնիվ զավակների կերպարները, նրանց հուգու լույսն ու հավատը, նրանց գեղեցիկ սիրո արտացոլումը։ Հացի և հոգու նրբին կապից են ծնվել «Առաջին ծիլեր», «Ցորյանի ծովեր», «Խաչբուռ», «Աղորիք», «Հունձք կը ժողվեմ» և այլ հրաշքներ, որոնք Վարուժանի ստեղծագործության գոհարներն են՝ շաղախված իր հոգու բյուրեղյա մաքրությամբ, աղոթքով ու անպարագիծ սիրով։ Մասնակիցը պետք է վերլուծի այս շարքի որևէ բանաստեղծություն՝ իր ընտրությամբ։

3. 20-րդ դարի մեծագույն արձակագիր Հրանտ Մաթևոսյանը մի առիթով ասել է.«Տա Աստված, որ աշխարհի քարտեզի վրա մի բնակավայր էլ ես ավելացնեմ… Ծմակուրը առայժմ իմ հայրենի գյուղն է, ես այդ գյուղի ակնարկագիրն եմ, կուզեք ակնարկագիր ասեք, կուզեք լուսանկարիչ,կուզեք նկարիչ- նատուրալիստ։ Իրական այդ գյուղը կվերաճի՞ գրական Ծմակուտի, կկարողանա՞մ վերաճեցնել՝ չգիտեմ»։ Նա ոչ միայն վերաճեցրեց այդ գյուղը Ծմակուտի, այլև դարձավ այդ Ծմակուտի քուրմը, գրեց այդ հրաշք աշխարհի ասք- էպոսը՝ հայ արձակը դուրս բերելով համաշխարհային արձակի մայրուղի։ Հայրենի եզերքի ու նրա մարդկանց Մաթևոսյանը կանգնեցնում է աշխարհի առաջ և ցույց տալիս նրանց մաքառումներն ու խոհերը, կարոտն ու տառապանքը և ընթերցողին պարգևում հայտնության հրաշքը։ Այսպիսի մի հրաշք պատմություն է «Կանաչ դաշտը» ասքը, որը , հեղինակի խոսքով պատմել է իր տղայի համար.««Կանաչ դաշտը» տղայիս համար պատմեցի և պատմելու ժամանակ ինքս սարսռացի, տեսա՝ շատ գեղեցիկ մի բան կա, որ պիտի անպայման գրել։ Բայց երբ սկսեցի գրել, էն, ինչը որ պատմելիս ինձ հուշեց , որ ես սա անպայման պիտի գրվածք դարձնեմ, էդ չգտա։ Ուրիշ բան, որ սիրուն է արված, և ընթերցողն արատը չի նկատում, ուրիշ բան, որ լավ է գրված և լուսապսակի բացակայությունը ոտքի վրա չես նկատում։ Լավ է պատմված , լավ լեզու կա, որովհետև նաև լեզվի համար եմ այդպես արել, որովհետև երեխաների համար եմ

արել և լեզու, ռիթմ եմ սովորեցնում: Սիրո արտահայտություն է նաև՝ երեխայիս համար էի պատմում, լավագույնն էի պատմում: Սակայն ինչ-որ բան կորավ: Ափսոս, որ կորավ»:
Կանաչ դաշտը արթնացել է իր ամենօրյա քնից, նկյանքը հավերժորեն կրկնվում է : Բայց այս անգամ հովտում կապված պառավ կարմիր ձին վտանգի հոտ զգաց օդում և մեղմ խրխինջով կանչեց իր միամսյա քուռակին. նա գիտեր, որ կայծակը ճայթելու է , և քուռակը վախենալու է , իսկ քուռակը կարծում էր՝ մայրն իրեն կանչում է կուրծք տալու, բայց ինքն ուզում էր «խոտերից ու ծաղիկներից հոտ քաշել և մեկիկ-մեկիկ ճանաչել խոտերը» . հենց այդ ժամանակ ճայթեց կայծակը և քուռակը վազեց դեպի մայրը: Դա քուռակի առաջին կայծակն էր, և նա պատսպարվեց մոր կրծքի տակ: Կարծես այս պահից սկսվում է վտանգի գիտակցումը: Հետո քուռակը հանդարտվում է և սկսում կուրծք ուտել՝ լսելով անձրևի թմբկահարումը: Հովիտն ապրում էր իր հերթական օրը. այդտեղ ջուր խմելու էին գալիս եղնիկները, ուլեր ու գառներ, նաև՝ այդ ձին, որ շատ քուռակներ էր ունեցել, բայց այս մեկը՝ «աստղազարդ էր, ծածկված էր եղյամի հատիկների նման աստղիկներով:Ինքը կարծես եղյամոտ էր, երևի ոտքը՝ ձյունոտ: Ճակատին կլոր սպիտակ կար, աստղածաղկի նման »:
Ձիերի աչքերը գեղեցիկ էին, ու շրջապատն արտացոլվում էր նրանց աչքերում, և քուռակի աչքերում արտացոլվում էին կաղնին, ծաղիկները, մասրենին, իր կարմիր մայրը և ամբողջ կանաչ հովիտը: Անձրևը դադարել էր, կայծակ այլևս չէր ճայթելու, թացության մեջ փայլում էր հովտի միակ կաղնին, և՛մասրենու թուփն էր փայլում, և՛ ՛ձիու թաց մեջքը, և՛ քուռակի մեջքը, և առո՛ւն էր փայլում, որից կայծակի հոտ էր գալիս: Ձին ճանաչում էր հովտի բոլոր բույրերն ու հոտերը, բայց անհանգստացնող ինչ-որ բան կար հովտում . ձին ունկնդրեց լռությունը՝ զգալու հովտի օտար հոտերը, և նա զգաց վտանգի հոտը. նա զգում էր, որ հովտում թշնամի կար, բայց այդ թշնամին չէր երևում. հովիտը դավաճանում էր ձիուն, որովհետև չէր մատնում թշնամու տեղը:
Մինչ վտանգը հովտի մեջ անշարժ կանգնած էին ժայռը, կաղնին, մասրենին, ձին: Ժայռը նիրհում էր, կաղնու կաղինները ապահով զրահների մեջ լցվում էին հյութով: Մասրենին իր ծաղկաբաժակները բացել էր արևի դեմ և արև էր խմում:
Ամենքն ապրում էին իրենց ամենօրյա օրը՝ չզգալով ոչ մի վտանգ: Բայց ձին զայրույթից դողում էր . նա չէր կարողանում որսալ վտանգը: Եվ հանկարծ….վտանգը մոտեցավ. քուռակը նայում էր մի բանի և ապա մորը: Մայրը ոչինչ չէր տեսնում, իսկ քուռակը մղվում էր դեպի այդ բանը: Կարմիր ձին ամեն ինչ հասկացավ և նետվեց դեպի քուռակը: Ձին կապված էր, և պարանը նրան խանգարում էր: Քուռակը փորձում էր վազել դեպի մայրը, բայց գայլը կտրեց նրա ճանապարհը: Գայլը բռնեց նրա հետևի ոտքը, բայց քուռակը դուրս պրծավ: Հետո մոր անասելի թափից կտրվում է պարանը . սկսվում է կենաց ու մահու մի զարհուրելի պայքար:Գայլի լակոտները սոված էին, գայլը չպետք է բաց թողներ այսքան հրաշալի որսը, պառավ ձին պաշտպանում էր իր քուռակին:
Հովտի մյուս երեսին գամփռ շները սրվեցին, սևադունչ Թոփուշ շունը զգաց վտանգը: Բլուրների մյուս երեսին լսվում էր արագընաց զարմիկի սմբակների ձայնը:
Սկսվեց անհավասար պայքար. ձին արդեն պառավ էր , ուժասպառ, իսկ գայլը՝ անկոտրում, հաստատակամ:

Գայլը հասկացավ, որ ձին պաշտպանելու է իր քուռակին, ձին հասկացավ , որ գայլը դատարկաձեռն չի հեռանալու հովտից։ Մինչև երեկո շարունակվեց անօրինակ կռիվը կարմիր պառավ ձիու և գայլի միջև։ Նրանց աչքերը մթնել էին, և նրանք իրար հազիվ էին տեսնում, հոգնածությունից խլացել էին։
Փոքրիկ հովիվը դուրս եկավ բլուրների հետևից՝ հիանալու հովտի գեղեցկությամբ, բայց այն, ինչ տեսավ, այնքան տգեղ էր, որ նա չէր կարողանում խոսել։ Դիմացի բլուրներից լսվեցին հովիվների ձայները . շները սրվեցին ու տեսան և պոկվեցին։
Ձին ընկել էր, գայլը հանկարծ լսեց շների հաչոցը, և նա մտածեց . «Բախտը հո չէր կարող լինել այնքան անողոք , որ իր մեկ օրվա չարչարանքն անտեղի անցնի, և ինքը իր երեք ձագի մոտ դառնար քաղցած ու դատարկ»։
Իսկ ձին, լսելով շների հաչոցը, հավատաց , որ շները հաչում են իր քուռակի համար. «բախտը հո չէր կարող այնքան դաժան լինել, որ իր քուռակը ապրի ընդամենը մի հունիս»։ Այնուհետև շներն ու գայլը կռվում էին։ Անհավասար էին ուժերը, և «գայլն ուզում էր քնե՛լ, քնե՛լ։ Կռվելու ուժ չկար, գայլն ուզում էր մեռնել, հանգստանալ…»։
Շները կորցրին գայլին, գայլը կարողացավ փախչել, եթե չփախչեր , նրա ձագերը որբ կմնային և կկոտորվեին։
Քուռակը դնչիկով խփեց մոր փորին, սակայն մայրը չկանգնեց . քուռակը նստեց մոր փորի մոտ, հետևի ոտքը սաստիկ ցավեց, և սկսեց ծծել։Եվ մայրը դեռ կաթ էր տալիս, վարա՛ր-վարա՛ր կաթ էր տալիս վերջին անգամ այլևս որբ իր քուռակին, իր բոլոր քուռակներից ամենագեղեցիկին։ Օրն ավարտվեց։ Ամբողջ հովիտը լուսավոր կանաչ էր, և սև էր, շատ մուգ սև էր պառավ կարմիր ձիու շուրջը։ Պառավ ձիու կարմիր մարմինն ընկած էր այդ սև շրջանակի մեջ։ Այդպես մնաց 3 տարի . հետո նրա ոսկորների արանքից բուսեց կանաչը, հովիտը նորից ծփաց իր կանաչով, ժայռը լուռ հսկում էր կաղնուն, կաղնին կաղնիորեն շնորհակալ էր նրան՝ կայծակները իր տակ թաղելու համար, մասրենին արև էր խմում, իսկ հովտում արածում էր աստղազարդ մի ձի՝ ետևի աջ ոտքի սրունքը սպիտակ, ճակատին՝ սպիտակ աստղածաղիկ։
Աստղածաղիկ ճակատով ձին բարձրացնում էր գլուխը և նրա աչքերում արտացոլվում էին կանաչ հովիտը, ժայռը, կաղնին, մասրենին։
….Եվ կարմիր պառավ ձին մեղմ խրխինջով հայտնեց նրան իր տեղը….
Այսինքն՝ տոհմի կանչը, կյանքը շարունակելու անհրաժեշտությունը դառնում են հավիտենական , կանաչ դաշտը կյանքն է , ուր ճայթում են կայծակներ, տապալվում են ծառեր, բայց հաջորդ պահին ամեն ինչ կրկնվում է, բնությունը մարդուն առնում է իր տարերքի մեջ, մարդը նույնպես տապալվում է կաղնու նման, մեռնում է ձիու նման, ապրում է գայլի նման, որովհետև կանաչ դաշտում պետք է արածի մի նոր ձի, տապալված կաղնու արմատներից պետք ծլի մի նոր կաղնի , գայլի ձագերը չպետք է մեռնեն սովից։
Ի սկզբանե ներդաշն են եղել բնության և մարդկային օրենքները . աշխարհը հավիտենական է այդ օրենքների համերաշխությամբ։
Հրաշալի ասքի վերջում Թոռնիկը չի ուզում, որ ձին մեռնի, ուզում է, որ շները խեղդեն գայլին, բայց պապիկը՝ փոքր հովիվը, նրան հիշեցրեց կայծակի չոր ճայթյունի,

մոխրագույն ժայռի, կաղնու ու մասրենու մասին, որոնք նույնությամբ ապրում են կանաչ հովտում, և աստղազարդ ձին էլ արածում է այդտեղ՝լսելով իրեն կանչող մոր մեղմ խրխինջը….և ամեն ինչ գեղեցիկ է։

4. Հայ գրականության «ազնիվ կենսագրի» հետ մենք ապրում ենք մանկությունից։ Նա մեր հեքիաթասացն է, մեր առաջին հրապուրանքի թարգմանիչը, մեր ուրախ ու տխուր օրերի ուղեկիցը, մեր հասունության զրուցակիցը։ Մեզնից ո՞վ չի եղել «Թումանյանի պալատում», ո՞վ չի լսել նրա իմաստուն հեքիաթները, «անարատ մարդ» մնալու պատգամը, ո՞վ չի լացել փոքրիկ Գիքորի համար և ցանկացել«հաց տալ նրան մեր տաշտից»…Բոլո՛ր։ Ամենայն հայոց բանաստեղծը եղել է ու կա բորորի հիացմունքի կրողը։ Նրա մասին գրել են բոլորը՝ բանաստեղծներն ու քննադատները, ընթերցողներն ու թարգմանիչները, գրչակիցներն ու սկսնակ բանաստեղծները։ Իսահակյան ու Չարենց,Զորյան ու Դեմիրճյան,Շանթ ու Տերյան, Ջրբաշյան ու Թամրազյան, Աղաբաբյան, Հախվերդյան ու Սևակ. անվերջ կարելի է շարունակել այս շարքը։

Նա մեծ էր ավելի, քան եղավ։ - Երկրնքի նման ընդարձակ,
Օվկիանի նման՝ իր ոգին ընդգրկել էր կյանքը անեզր։ -
Եվ ոգու ափերին նստած՝ նա նայում էր հայացքով պայծառ, -
Եվ որսում էր երգեր ու խոհեր, և տեսնում էր չքնաղ երազներ…

Եղիշե Չարենց

«Մեր թռիչքը Հովհաննես Թումանյանի արվեստի գոհարակերտ բարձունքից այն կողմ չի անցել»։ Ավետիք Իսահակյան

Թումանյանը բազմաժանր գրող է։ Նրա կախարդական գրչի տակից դուրս են եկել մանկական բանաստեղծություններ, պոեմներ, լեգենդներ, բալլադներ, զրույցներ, պատմվածքներ, հեքիաթներ և այլն։ Այս բորոր ժանրերում հրաշալիորեն դրսևորվել է հանճարի անսպառ ձիրքը։ Թումանյանի արձակի անուրանալի հատկանիշներից է նրա լայն ճանաչողությունը բնության, կենդանիների, մարդկային հոգու, ժողովրդական կյանքի նկատմամբ : Այս բոլորն իրենց հետ բերում են խոր փիլիսոփայություն, որը բացահայտում է մարդկային խիղճն ու տառապանքը, կատարյալին, մարդկայինին հասնելու անընդհատ ձգտումը։ Իր մի շարք գործերում՝«Արջառոս», «Գելը», «Շունը», «Եղջերուն», «Մայրը», «Երկաթուղու շինությունը» նա արտահայտում է իր խորին տագնապները գեղեցկության անվերջ կորուստների համար։ Հարազատ մնալով ժողովրդական մտածողությանը՝ նա դեմ է դուրս գալիս նյութապաշտությանը, փողի ավերիչ ուժին «Գիքորը»,«Մերոնք» պատմվածաշարը։ Իսկ անկրկնելի հեքիաթներում «Քաջ Նազարը»,«Անբան Հուռին», «Անհաղթ աքլորը», «Սուտլիկ որսկանը»,«Կռնատ աղջիկը» և այլն , նա դատապարտում է կեղծիքն ու ստորությունը, ծաղրում է հիմարությունը, փառաբանում է սերն ու բարությունը։ Մնացյալը՝ մասնակիցը։

Գնահատման չափանիշներ

11-րդ դասարան

1 հարց՝
ենթահարցեր՝ 1- 1 մ., 2-1 մ., 3-5 մ., 4-3 մ.

2 հարց՝
ենթահարցեր՝ 1- 2 մ., 2-3 մ., 3-5 մ.,

3 հարց՝
ենթահարցեր՝ 1- 5 մ., 2-3 մ., 3-2 մ.,

4 հարց՝
ենթահարցեր՝ 1- 3 մ., 2-3 մ., 3-4 մ.,

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան